# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՈ
# ԻՐ ԿԱՄՔՈՎ ԹԵԼԱԴ
# ԼՐՏԵՍՆԵՐԻ-ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻ ՏՐՈ
# ՄԵՐ ՅԵՐԿՐ

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ—ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՎՃԻՌՆ Ե

Ամբողջ յերկրի հետ միասին, ուշի-ուշով հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությանը հետևող Յերևանի աշխատավորությունը, անհուն գոհունակության զգացումով ընդունեց Հայրենիքը վաճառքի հանած լրտես ու դիվերսանտ տրոցկիստ-սրիկաների վերաբերյալ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի վճիռը:

Յերևանի բոլոր գործարաններում, շինարարություններում, խորհրդային հիմնարկներում բանվորները, ինժեներ-տեխնիկներն ու ծառայողները կրկին ու կրկին անգամ յելույթներում, ընդունած բանաձևերում արտահայտեցին իրենց նվիրվածությունն ու սերը Լենինի-Ստալինի փառապանծ կուսակցության ու ժողովուրդների մեծահանճար առաջնորդ ընկեր Ստալինի հանդեպ, վորի իմաստուն ղեկավարությամբ ծաղկում ու էլ ավելի հզորանում է Խորհուրդների յերկիրը:

Յերևանի աշխատավորությունը միահամուռ պահանջում է մեղադրյալի աթոռին նստեցնել աջ ճիվաղներին՝ Բուխարինին, Ռիկովին, Ուգլանովին և մյուսներին, վորոնք տրոցկիստական-ֆաշիստական բանդիտների հետ միատեղ կատարել են նողկալի արարքներ, վորոնք հակախորհրդային տրոցկիստական վոհմակի հետ միասին մեր սքանչելի Հայրենիքը վաճառքի եյին հանել գերմանական ու ճապոնական ֆաշիստներին:

***

Կոնսերվի գործարանի 500-ից ավելի բանվորների թռուցիկ միտինգը վողջունեց Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի կայացրած միանգամայն արդար դատավճիռը:

Գործարանի բանվորական կոլեկտիվը խոստանում է բազմապատիկ յեռանդով լծվել գործի, լայնորեն ծավալել ստախանովյան շարժումը և 1937 թվի տարեկան պլանները կատարել Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 20-րդ տարեդարձին՝ նոյեմբերի 7-ին:

Միաժամանակ կոլեկտիվը պահանջում է խորհրդային օրենքի ամենայն խստությամբ դատաստան տեսնել Խորհրդային Հայաստանում հայտաբերված հակահեղափոխական-տրոցկիստական — նացիոնալիստական վիժվածքների՝ Ն. Ստեփանյանի, Գալոյանի, Սիմոնյանի և մյուսների հետ:

## ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՎՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

ԼԵՆԻՆԱԿԱՆ, 31.— Լենինականի և շրջանի աշխատավորները մեծագույն գոհունակությամբ դիմավորեցին ԽՍՀ. Միության Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի վճիռը՝ Հայրենիքի դավաճանների ու մատնիչների բանդայի նկատմամբ:

Առավոտյան ժամը 9-ին, չնայած տեղացող ձյունին, Մայիսյան ապստամբության հրապարակը լեփ-լեցուն եր ժողովրդով: Հավաքվել եյին 20 հազար աշխատավոր: Նրանք իրենց հետ բերել եյին մարտական դրոշներ, մեծ Ստալինի ու նրա պանծալի զինակիցների պորտրետները:

Սահմանապահ Բելոուսովի, չքանշանակիր մեքենավար Սուրեն Գրիգորյանի, բժիշկ Աղայանի, ստախանովական Կարտաշովի, կոլտնտեսական Բարգեն Մկրտչյանի, ուսուցչուհի Արփիկ Թոփչյանի յելույթների մեջ հնչում եյին պրոլետարական դատարանի վճռի նկատմամբ լիակատար գոհունակության ու հավանության խոսքերը:

Միտինգն ընկեր Ստալինին ուղարկվելիք վողջույնի հեռագիր ընդունեց, վորի մեջ խոսք է տրվում ե՛լ ավելի սերտորեն համախմբվել կուսակցության շուրջը, ե՛լ ավելի բարձրացնել զգաստությունը:

«Մենք,— ասված է բանաձևի մեջ, —չենք տարակուսում, վոր դատաքննության ընթացքում մերկացված Բուխարինը, Ռիկովը, Ուգլանովն ու մյուսներն արժանի պատիժ կստանան պրոլետարական դատարանից»:

Միտինգը վողջույնի հեռագրեր ուղարկեց նաև ընկերներ Մոլոտովին, Վորոշիլովին, Յեժովին, Բերիային և Ամատունուն: